

HAI SCOUT

REVUE MENSUELLE

1 Janvier 1935 No. 11 5eme Année

ВЪДЪРЪ ФЕРЪ 11 1 000 000.0 1935

ՀԱՅ ՍԿՈՒԹԻՑ

Պատկերազարդ ամսաթերթ

Պաշտօնաթերթ Հ. Մ. Լ. Մ. ի և Սկաուտներու

Հ ի մ ն ո ւ ա ծ 1 9 1 8 - ի ն

Նամակ, յօդուած, նկար, քերպ, գիրք եւ դրամ դրկել՝

JIRAIR MINTANDJIAN ի

55, Rue de Meaux, PARIS (19e)

HAI SCOUT

Revue mensuelle

Organe de l'Union générale arménienne de scoutisme

Fondée en 1918

Rédaction et Administration 55, Rue de Meaux, Paris-XIX

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ (ԿԱՆԽԻԿ)

Ֆրանսա, Սուրիա Պալֆաներ	20 Ֆրանֆ
Աւրիջ երկիրներ	30 Ֆրանֆ
Բոլոր «Սկաուտ»ներու բաժանորդագրութիւնը (պարտաւորիչ)	15 Ֆրանֆ
Զեռֆէ՛ հասը	2 Ֆրանֆ


Թերթիս խմբագրութիւնը կը խնդրէ Մասնաճիւղերէն, որ Հալէսլի Մասնաճիւղին կազմած խիստ սիրուն խմբանկարին նման խմբանկարներ դրկեն մեղքի: Թերթիս սուզ էջերուն համար աւելի նպաստակայարմար եւ աւելի հրապուրեց են այս կարգի խմբանկարներ, որոնց գեղեցիկ մէկ նմոյշը դրկուած է մեղքի Հալէսլի Մասնաճիւղէն եւ որ կ'երեւի ներկայ թիւին մէջ:

Հայ Սկաուտ, միշտ պատրաստ խոստումիդ եւ դաւանանիքիդ. եղի՛ր պարտաճանաչ եւ նշդապահ:

ՀԱՅ ՍԿԱՌՈՒՐ

ԲԱՐՁՐԱՑԻՐ

ԲԱՐՁՐԱՑՈՒՐ



ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ Հ. Մ. Ը. Մ. Ի ՍԿԱՌՈՒՏՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

Ե. Տարի Թիվ 11 1 Յունուար 1935 1 Janvier 5^{me} Année № 11

ՀԱՅ ՍԿԱՌՈՒՏՆԵՐՈՒ ԽՈՍՔԸ

Դժուարին պայմաններու մէջ տարի մը բոլորեցինք :

Հակառակ ասոր՝ տեղի ունեցան տարեկան բանակումներ, համագումար, սկառուտական վարժարան, բանակում-ցուցահանդէս, միջխմբային շարանժ-մրցումներ եւլն., եւլն., որոնք կը ներկայացնեն լուրջ աշխատանքի մը արդիւնքը, որուն մշակները կրնան հրճուիլ:

Սակայն կարգ մը պետերու դէմքին վրայ կ'երեւի մելամազձոտութեան արտայայտութիւն մը : Քանզի, անոնք վերյիշելով բարերաստիկ տարիներու շարքերու թիւր, կը յուսային այսօր քառապատկուած տեսնել զայն, եւ ինչ չէ՛, բոլոր հայ պատանի-երիտասարդները տեսնել Հ. Մ. Ը. Ի. Ի. Ակա-ռուտական շարքերուն մէջ՝ շնորհիւ սկառուտին շինիչ ու հմայիչ յայտագրին, եւ սակայն, իրականութեան մէջ, կը տեսնեն թէ՛ հազիւ կարող ենք մեր սովորական շարքերը պահել տուեալ պայմաններով :

Այս պարագան կ'արժէ խորհրդածութեան նիւթ ընել:

Այս տարեգլխի սկիզբը ակնարկ մը նետենք անցեալի վրայ եւ ջանանք տեսնել մեր կարած ճամբան՝ սուր աշքերով ու ապա լաւ բենք իրականութեան ձայնը :

Կարգ մը շարժումներ, որոնք ժամանակի ընթացքին կը շարունակուին սերունդէ սերունդ, հարկաւորաբար կը պարտադրեն իրենց հետեւորդներուն կարգ մը գեղեցիկ սովորութիւններ, ինչպէս, փոխազարձ եղբայրութիւն, իրերօգնութիւն, Փեղիքական, բարոյական եւ ընակութեան առողջապահութիւն, գաղափարական ազնիւ ու վսեմ բարձրացում եւն .:

Ուրիշներ աւ կ'առաջարկեն իրենց շարքերուն՝ կարգ մը ժակերեսային եւ

20395-44 323-2000

վաղանցուկ միջոցներ : Իսկ ընկերութիւններ ախոյեանութիւն եւ այլ անամէջ վառքեր կը գերազանց պատանի-երիտասարդներու ընդհ . զարգացումին մէջ , լոկ զրօնանքի և հաճոյքի հրապոյցներով :

Հա՞րկ է ըսել թէ՝ այս վեջինները աւելի հեշտութեամբ կը լեցնեն իրենց չարքերը :

Առաջին կազմակերպութիւնները չեն անդիտանար , որ զօրաւոր միութիւնները , թէպէտեւ դանդաղ , եւ սակայն կը յառաջանան աւելի ապահով ու կը մնան լուրջ ու անտարբեր օրուան թեթեւ ասուլիսներուն հանդէպ : Ոչինչ կարող է զիրենք շեղեցնել իրենց վեհ զործէն , զոր կ'ուզեն տեւականօրէն կատարելագործել :

Վերջին կազմակերպութիւնները , վազամեռիկ փայլ ունեցող յաջողութեանց հակամէտ ոչ - տեւական խանդավառութեամբ լի , արագօրէն ու անտարբեր կը հիւսեն քող մը , ծածկոց մը , քրտնաբեր եւ խոր աշխատանքի մը դժուարութեանց արտաքինը սքօղելու համար :

Լաւ զիտես , խմբագե՛տ , որ քու ի զործ դրած սկառատութիւնը պէտք է պատկանի առաջին զասակարգին . ուստի աչալուրջ ու ժպտագէմ շարունակէ աշխատանքդ , ժամանակին թողլով զործին վերջնական իրականացումը :

Եթէ ընտանիքը եւ վարժարանը կարենային պատանի - երիտասարդութեան ընդհ . զարգացման համար հայթայթել լիակատար նիւթեր եւ զանոնք օգտագործել ի նպաստ այդ զարգացման , այն տեն սկառատութիւնը ստեղծելու պէտքը չպիտի զգացուէր բնաւ : Մի մոռնար սակայն թէ՝ քանի՛ քանի՛ տարիներ ունին անոնք , տղան կազմելու համար : Ուստի , մէկ քանի ամիսներու եւ տարիներու աշխատանքով մի՛ սպասեր , որ հասնիս կատարելութեան :

Սակայն , երկար աշխատանքի մը առջեւ գտնուելուդ համար մի՛ յուսահատիր . վազուան քաջալերական արդիւնքներուն համար է որ կ'աշխատիս , յուսահատութիւնը զօրաւոր նկարագրի ճառագայթումի պակասը զգալի կ'ընէ :

— Այս օրուան կացութեամբ , սրօնի եւ այլ նորաձեւ ընկերութեանց դէմ ոչինչ կարող ենք ընել , պիտի պատասխանես : Անոնցմէ հրապուրուած՝ կը քաշուին մեր պատանի - երիտասարդներէն թեթեւամիտ եւ սկեսպտիկ զասակարգը :

— Ծառ հնարաւորութիւններ կան , զրօնանքի եւ հաճոյքի միայն ծառայող այդ նորաձեւութեանց դէմ կատարելիք : Ատոնցմէ ամենակարեւորները յաճախ մոռացութեան դատապարտուած են եւ հետեւարար պէտք է որ յաճախ լիշեցնենք անոնց գլխաւորները , որոնք են . 1.— Ընտանիքը , 2.— Տղան եւ 3.— Վարժարանը :

1.— Ընտանիքը զինակիցն է սկառատութեան եւ կը զործէ առանց անոր աշխատանքն ու իշխանութիւնը խաթարելու , առանց երկրորդ , անսովոր կեանք մը ստեղծելու՝ սովորականէն դուրս : « Սկառատը ամէնուն բարեկամն է » իր սկառատ ընկերներուն եղրայրակցութենէն առաջ . ուստի յարդանք ունենանք ընտանեկան յարկին հանդէպ . վարժեցնենք մեր սկառատները՝ մեր խումբերէն ներս իրենց ստացած անմեղ հաճոյքներով ու օգտաշատ գիտելիքներով հարատացնել ընտանեկան բոյնը . օգնե՛նք իրենց , հասկցնելու համար թէ՝ իրական սկառատներ կ'ըլլան այն ատեն , երբ իրենց տուներէն ներս մտնեն մաքուր ու զործնական պիտանի սովորութիւններ , որոնք պիտի երջանկացնեն

տանը : Խորունկ կերպով զգա՞նք թէ՝ ընտանիքն է, որ մեզի կը յանձնէ այն ամենամեծ ու թանկաղին հարստութիւնը, որ է տղան եւ զոր պարագնք վերադարձնել իրեն, աւելի աղնիւ, բարոյապէս ու Փիղիքապէս զօրացած ու բարձրացած :

2.— Ծղան սկառուտութեան զինակիցն է . Այս աշխարհ չէ եկած սկառուտութեան օգտակար ըլլալու համար , այլ սկառուտութիւնն է որ ստեղծուած է անոր օգտակար ըլլալու առաջադրութեամբ : Բայց ի՞նչպէս կրնանք օգտակար ըլլալ եւ ծառայել մէկին , որուն պէտքերուն անուեղեակ ենք : Որովհետեւ ամէն մէկ սկառուտին համար մեր ի զործ դնելիք ծառայութեան եղանակը տարբեր կ'ըլլայ : Պէտք է նախ ճանչնալ սկառուտը բարոյապէս , մտաւորապէս եւ Փիզիքապէս , եւ ապա զայն առաջնորդել օգտակար եւ հաճելի նորութիւններով՝ անկեղծօրէն նուիրուելով անոր : Այն ատեն միայն անոնք կ'ունենան վրօտահութիւն մեղի հանգէպ ու կը դառնան մեր զինակիցը : Միօրինակ եւ սովորական դարձած յայտագրերու զործադրութիւնը կը ճանձրացնէ տղաքը եւ պատճառ կը դառնայ որ անոնք բացակային արշաւներէ եւ հաւաքոյթներէ , որուն համար պէտք չէ զարմանալ : Բացարձակապէս անուեղեակ պէտք է ըլլալ սկառուտական նպատակներուն եւ միջոցներուն , նման անօդուտ աշխատանքներով գէշ արգիւնքներ ձեռք ձգելու համար : Նոյնպէս յոոի արգիւնք կուտան այն ճիգերը , որոնք կը ձգտին կնճոռուել սկառուտական կեանքը , պատրաստելով միայն չափէն աւելի նրբացած եւ մեքենայացած սկառուտներ . ո՛չ , պէտք է կատարեալ կերպով կանոնաւորել սկառուտական խումբի մը տրուած դատիքակութիւնն ու կրթութիւնը , որոնցմէ պիտի հոսի սկառուտին հնազանգութեան եւ կրթուելու ընդունակութեան ոգին , որ միայն կարող է ստեղծել սկառուտին երջանիկ կեանքը : Սկառուտին այդ կեանքը պէտք է ճառագայթէ եւ իր շուրջը սփոէ լոյս , որմէ տղան , ոչ — սկառուտ տղան պէտք է հրապուրուի եւ յափշտակուի :

Իր աշխատանքի սենեակին մէջ չէր որ Մեծ Պետք ստեղծեց սկառւառթիւնը, այլ տեսաւ տղաքներ, շա՛տ տղաքներ, ուսումնասիրեց անոնց խառնուածքին ու բարոյականին զանազանութիւնները, եւ ըստ այնմ անոնց հրամցուց հրապուրիչ եւ օգտակար խաղեր :

3.—Վարժարանը զինակիցն է սկառուտութեան, ուրեմբ կարելի է հետեւ-
ցնել թէ՝ սկառուտ խմբապետը տեղեակ է սկառուտին դպրոցական կեանքին,
դոր կը ջանայ զիւրացնել եւ դարձնել հաճելի։ Երբ մեր բոլոր խմբապետները
հասկնան թէ՝ իրենց գործունէցւթեան ծրագիրը պէտք է աջակցի վարժարանի
ծրագրի իրագործման եւ երբ հասկնան թէ՝ ո՛ եւ է գործարանի կամ շարժա-
պատկերի, թանգարանի կամ կենդանաբանական ու բուսաբանական պարտէ-
զի մը տրուած յաճախակի այցելութիւններ պիտի սատարեն իր սկառուտներուն
դպրոցական կեանքին, այն տաեն եւ այն ատեն միայն ուսանող – սկառուտնե-
րուն մէջ ստեղծուելիք յաջողութիւններն ու յառաջդիմութիւնները մազնիսա-
կան անտեսանելի ուժով մը Հ. Մ. Լ. Մ. ի սկառուտական շարման շուրջը պիտի
բոլորեն հայ տղային բարոյապէս ու Փիղիքապէս բարձրացման անկեղծօրէն
ցանկացող Պատ. Ուսումն. Խորհուրդներն ու Հոգարարձուները :

Աւրեմն, միշտ մեր մօտն է որ սլէտք է վհառենք մեր յաջողութեան եւ անյաջողութեան գաղտնիքները, մէկին մօտենալու եւ միւսէն խուսափելու հա-

մար ուշադիր եւ չըջահայկաց ըլլալով : Երբեմն մերկ իրականութիւնները չափազանցօքն կը կրկնենք ու կրկնենք, ինչ որ ո եւ է արդիւնք չեն տար, երբ պարզ իրականութիւնները կ'անուեսուին կամ կը ձգձգուին : Մեր մեծագոյն թշնամին ձղձգումն ու յուսահատութիւնն է, իսկ մեր միակ մեծ ուժը՝ ԿԱՐՔԻ. ահա մեր անյաջողութեան եւ յաջողութեան գաղտնիքը : Եւ որպէս զի հասնինք մեր նպատակին, պէտք է, յարգենք ընտանիքը՝ զինակիցը սկառուտութեան եւ օժանդակենք վարժարանին, որ իր կարգին զինակիցն է սկառուտութեան եւ ի լրումն ամենայնի ապահովենք այս երեք անդէն եւ խաղաղութեան ցանկացող ու ձգոող զինակիցներուն փոխադարձ ու մաքուր զինակցութիւնը եւ ահա այն առեն շարքերու պակասը զգալի չպիտի ըլլայ:

ՀԱՅ ՍԿՈՌԻՑ

Հ. Մ. Լ. Մ.

ԵՒ



ՍԿԱՌԻՏԱԿԱՆ

ՎԱՐՉԱՏՈՒՆԵՆ

« Հայ Սկառուտ » ըլլալով Հ. Մ. Լ. Մ.-ի եւ Հայ սկառուտներու պաշտօնաթերթը, կը յիշեցնենք բոլոր Շրջաններուն թէ՝ անոր մէջ զրուած ո եւ է յայտարարութիւն եւ հրահանդ պաշտօնական է եւ հետեւարար գործադրելի՝ առանց մասնաւոր չըջարերական հրահանդի:

Գ. ՅԱԿՈԲԵԱՆ

ՆԵՍՏ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՎԵՐԻՆ ՄԱՐՄՆՈՅ (4 Դեկտ. 1934)

Ներկաներ՝ Եղբայրք Ն. Օհանեան, Գ. Յակոբեան, Գ. Մերձանօֆ, Յ. Պապէսեան, Տոքթ. Պալասան, Ժ. Մինթանձեան: Մարտիլիայէն Եղբ. Կարո Աւշագլեան ներկայացուցած էր իր գրաւոր առաջարկները :

Տրուեցան կարգ մը իմաստ կարեւոր որոշումներ, որոնք կը հաղորդուին յառաջիկային:

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՎԵՐԻՆ ՄԱՐՄՆՈՅ գնահատելով թերթի խմբադրութեան ու վարչութեան բրած նիւթական ու բարոյական գերազոյն զոհողութիւնները, ներկայիւս կը հրահանդէ բոլոր շրջաններուն, լրջօրէն աջակցիւ անոր՝ նիւթապէս եւ բարոյապէս, Հայ ժանուկին բարձրացման միակ ազգակը եղող սոյն հանդէսին տեւականացումը ապահովելու համար :

ԵԳԻՊՏՈՍԻ Շրջ. Վարչութիւն. — Ստացանք, չուտով կը պատասխանենք :

(Նարումակութիւնը կարդալ վերջին էջ)

ՀԱՅԱՍՏԱՆ


ԽԵԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Շարունակութիւն նախորդ քիւէն)

12. Հայաստանի միւս լիճերն են. Կապուտան կամ Աւրմիայ լիճ, որուն չառ աղի ըլլալուն պատճառաւ ձևել չանի: Անի շառ մը կտորներ, որոնց մէջ նշանաւոր էն Զիերու կղզի, Եշերու կղզի, Աշխարհներու կղզի: Դեղամայ լին, (պատ - 9), որ շառ գեղեցիկ է՝ իր շքեզ կազոյս նուրով և բարսուի քի տեսարաններով: Իր մէջ կայ Անեանայ կղզին, որուն վրայ կը դահուի



Պատկեր 8



Պատկեր 9

երեք եկեղեցիներով վանք մը: Զուրը անոյշ է և ունի շառ մը տեսակ ձուկեր, որոնց մէջ նշանաւոր է իշխանաձուկը (պատ - 10):


13. Գեղամայ լիճը կը գտնուի Ռուսահայաստանի այն մասին մէջ, որ կազմուած է 1918-ին ի վեր Հայաստանի ներկայ կառավարութիւնը:

14. Հայաստանի երկրորդական լիճերն են. Մովակ Հիւսիսի, Գայլառոյ ծով, Մովք լին կամ Խարբերդի ծով, Վանայ ծովին մօս՝ Արքակու լին և Նազիկ լին, իսկ ներկայ Հայաստանի մէջ՝ Մեծամօրի լին: Հրաշագեղ լիճ մըն մըն է Թոքքումի լինը, որ շրջապատուած է զեղեցիկ տեսարաններով:

15. Գետեր. — Հայաստանի մէջ ձմեռը ամենուրեք առաւ ձիւն տեղալուն պատճառաւ կը զորանան անհամար լիճեր, ակեր և զետեր:

16. — Հայաստանի գետերուն մէջ նշանաւոր են. Եփրատ, Տիգրիս, Ճորխ, Ալիս, Իրիս, Սիհան, Ճիհան և Արգի Հայաստանի մէջ Հայերուն նույրական գետը՝ Երասխ կամ Աքրափ, որ հինէն ի վեր Հայաստանի սահմանին մէջ գտնուած է (պատ. 11):


Երասխի գետին մէջ թափող բազմաթիւ գետակներէն նշանաւոր են՝ Ախուր-



Պատկեր 10

եան, որուն եղերքը շինուած է Հայաստանի հին մայրաքաղաքը Անի, և Տըդմուտ գետը, որուն հովիտին մէջ կը տարածուի Աւարայրի դաշտը : Այս դաշտին մէջ է որ սպարազետ Վարդան դօրավար կրակապաշտ Պարսիկներու գէմ պատերազմած է 1500 տարի առաջ : Այս պատերազմը ծանօթ է սպատմութեան մէջ Վարդանանց Պատերազմ անունով :

17. ԿԼԻՄԱՅՅ. — Հայաստանի Երկինքը ջինջ ու սպայծառ է : Թէեւ ձմեռը երկարատեւ եւ խիստ է, բայց ամժառը մեղմ է : Հայաստանի կլիման ընդհանրապէս առողջ է :



Պատկեր 11

18. ՀՈՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. — Հայաստան ունի խիստ օդտակար եւ թանկագին հանքեր : Ինչպէս, ծծումք, երկաթ, պղինձ, արծաթ, ոսկի, կաղաք, հանքածուին, պաղլեղ եւ աղուճակ (հանքային աղ) : Իսկ քարերէն ունի մարմարին, կայծքար, թերթաքար, չեչաքար (սպնդաքար), զանազան շինութեան քարեր, հայկաւ եւ բիւրեղաքար կամ վանակն (պատ. 12) :

19. — Հայաստանի լաւ սոսպուած մասերուն մէջ յաջողութեամբ կը մշակուին բամպակենի, կիտրոնենի, չաքարեղէղ, սլիստակենի (չորսն ալ կիլիա), ծիրանենի, գեղձենի, թթենի, որթատունկ, սերկեւենի, կեռասենի,

ցի եւ կամ վայրի էջ, վիթ եւ այծեամ (երկուքն ալ Կիլիկիա (պատ. 14, 15), բաղէ (պատ. 16), արծիւ (պատ. 17) եւ Հայերու սիրելի կռունկն ու ծիծեռնակը (պատ. 18):



Պատկեր 14



Պատկեր 15



Պատկեր 16



Պատկեր 17

22.—Միջատներէն կան մեղու, գեղեցիկ թիթեռնիկներ եւ որդան կարմիր բառաւած մանր միջատը, որմէ պատրաստուած ներկով ծիրանի կը ներկեն: Այս միջատը կը գտնուի Արարատ լեռան ստորոտը և Երասխի ափերը:

23.—Հայաստանի ձուկերէն նշանաւոր են՝ կարմրախայտ, իշխանաձուկ, լոստի եւ Վանայ ծովին «տառեխ» »ը: Իսկ սոզուններէն կան թունաւոր ու անթոյն օձեր եւ մողէսներ:

(Շարունակելի)

ՍԿԱՌԻՑՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆ — Բ.

ՄՈՒՏՔ ՄԿԱՌԻՑԱԿԱՆ ՇԱՐՔԵՐԻ ՆԵՐՍ

Հ. Մ. Բ. Մ. կ Սկառուտ Բնդհ. Միութիւնը յարգելով ուրիշներու զաղամարները, բաց է ամէնուն առջեւ առանց ընկերա - դասակարգային եւ յարանուանական խորութեան: Ան կ'աջակցի իր անդամներու ընդհ. դաստիարակութեան, քաջալերելով զանոնք՝ իրենց արժանիքները ծաղկեցնելու, ըլլայ արդ փիզիքական, բարոյական թէ մտաւորական հողի վրայ:

Հայ սկառուտներու չարժումը հիմնուած է 1912-ին Գ. Յակորեանի, Յ. Հինդլիեանի եւ լուսահոգի Շ. Քրիսեանի կողմէ եւ վաւերացուած է 1918-ին Պոլոյ Ազգային Երեսփոխանական ժողովի կողմէ իրր ԱԶԳԱՅԻՆ եւ ՀԱՆՐՕԳՈՒՏ Միութիւն:

Հ. Մ. Բ. Մ. կ Սկառուտներու Բնդհանուր Միութիւնը կը զեկավարուի Սկառուտական Վերին Մարմինէն, որուն անդամները կ'ընտրուին, ամէն երեք տարին անդամ մը, սկառուտ պատգամաւոր աստիճանաւորներու Բնդհանուր - Ներկայացուցչական Համագումարին:

Միութիւնը կ'ընդունի իր չարքերէն ներս, ծնողական մասնաւոր արտօնագրով, բոլոր պատանի, երիտասարդ եւ ուհիները, եւ կը տեղաւորէ զանոնք, իրենց տարիքին համեմատ՝ 8 - 12 Գայլիկ եւ Ծիծեանակներու, 12 - 16 կայտ եւ սկառուտներու, 17-էն վեր՝ Երէցներու բաժնին մէջ եւ որոնք կը կոչուին քեկնածու կամ կակուդ - տոտիկ:

Թեկնածուն, սկառուտական տեղական խորհուրդին կողմէ արձանագրուելէ յետոյ, անոր որոշումով, կը յանձնուի խմբակի մը առաջնորդին, եւ նուազագոյն մէկ ամիս նոր ընծայի քննութեանց համար հրահանգուելէ եւ երեք արշաւներու մասնակցելէ վերջ միայն, կը սկսի անցընել նոր ընծայի քննութիւնը: Այդ միջոցին կրնայ կրել սկառուտական տարագ, առանց ո եւ է նշանակի:

ՆՈՐ ԸՆԾԱՅ ՄԿԱՌԻՑ ՃՐ՝ պարտի գիտնալ, բացատրել եւ գործադրել հետեւեալները. —

- 1) Սկառուտին՝ խոստումը, դաւանանքը եւ նշանաբանը:
- 2) Հետախուզական վեց նշանները եւ հանդոյցները:
- 3) Բարեւները եւ անոնց նշանակութիւնը:
- 4) Սկառուտական կարգերը, աստիճանները, տարագը, չարքերը, պաշտօնները եւ ձիւղերը:
- 5) Կանոնաւոր կերպով կատարել բնական եւ շոէտական մարդանքներու գլխաւոր փորձերը եւ կարգապահական վարժութիւնները, բերնով, ձեռքով եւ սուլիչով հրամանները:
- 6) Կողմացոյցի ութը կողմէնը:
- 7) Բաց օղին մէջ կրակ վառել եւ օձուխ մը շինել:
- 8) Իր ցեղային ծագումը:
- 9) Արդի Հայաստանի սահմանները (գրացի Երկիրները), գլխաւոր քողաքները, լեռները, գետերը եւ լիճերը:

10) Բաժանորդագրութել « Հայ Սկառուտ »ին, կարգալ զայն . դրաւոր կերպով բացատրել դաւանանքն երկու յօշուած :

11) Ազգային , միութենական եւ սկառուտական դրօչներու հանգամանքը , պարզելու , յարգելու եւ բարեւելու եղանակը :

12) Մարդկային մարմնոյն երեք բաժանումները և հինգ զգայարանքները :

13) Պահակի դրութիւն եւ պարտականութիւնները :

14) « Քիմի » խաղին ծագումն ու ոլատմութիւնը :

15) Վարժ կերպով պատէ , ձողէ , ծառէ եւ չուանէ մը մագլցելու կերպը :

16) Վեց ամսուան մէջ ներկայացնել առ նուազն երկու ձեռական աշխատանք :

17) Միութենական մտից , ամսական , ազահովագրութեանց եւ ինքնութեան տոմսի տուրքերը վճարած ըլլալ :

ԾԱՆՈԹ . — Սկառուտ մը 13 տարեկանը լրացնելէ եւ վեց ամիս նոր ընծայմալէ վերջ միայն կրնայ երկրորդ կարգի քննութիւնը անցընել :

Բացատրութիւն նոր ընծայի 17 պայմաններուն

1 . — Սկառուտին խոստումը , դանանքը , նշանաբանը եւ կարգախօսը . —

ԽՈՍՏՈՒՄ . — Պատույս վրայ կը խոստանամ :

1) Բլլալ հաւատարիմ Աստծոյս եւ ծառայել հայրենիքիս :

2) Միջտ օգնել ուրիշին , եւ գործել իբր պարտականութեանը դիտակից արի եւ վեհանձն մարդ :

3) Հնազանդիլ հայ սկառուտի դաւանանքին :

(Նար .)

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԹԷՔՆԻՔ ՅԱՆՉԱԽՈՒՄԲ



ՄԱՐՍԵԼԻ ԳԱՅԼԻԿ ԵՒ ՍԿԱՌԻՏՆԵՐԻՆ ՄԱՍ ՄԸ

ԵՐԵՑՆԵՐՈՒՄ ԱՆԱԹԻՆ — Ա.

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ ԵՐԵՑ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ

Նշանակութիւն . — Երէց — Ակառւտները (Խօվլու Աբուր) սկառւտական շարժման որոշ ճիւղերէն մին կը կազմեն 17 տարեկանէն սկսեալ, երխաւարդներու ու չափահասներու ընդհ . դաստիարակչութեան մեթու մըն է :

Ընդունելութեան պայմաններ . — 17 տարեկանը թեւակուխող ամէն սկառւտ եւ ոչ — սկառւտ կրնայ մաս կազմել սկառւտական շարժման երէցներու ճիւղին . եթէ թեկնածուն սկառւտական շարքերէն է որ կուզայ, իր խումբի խմբագետին մասնաւոր գրաւոր արտօնութեամբն է որ կը ներկայանայ, արգէն իսկ գոյութիւն ունեցող « փաղանդ » ի մը պետին : Եթէ նոյն թաղին մէջ « փաղանդ » գոյութիւն չունի, այն ատեն թեկնածուն, իր հետ 4 — 5 թեկնածուներ եւս գտնելով՝ իրենց խումբի խմբագետին խորհուրդներով հիմը կը զնին նոր « փաղանդ » ի մը, որ ուշի ուշով կը հետեւի Երէց — սկառւտներու կանոնադիր — ծրագրին . իսկ ոչ — սկառւտ մը, երբ կ'ուղէ « թեկնածու — Երէց » արձանագրուիլ, պարտի ներկայանալ « փաղանդ » ի խմբագետին՝ ի ձեռին ունենալով բարի վարուց եւ արժանաւորութեան վկայագրեր, որոնցմայ ի վերջոյ պիտի ներկայանայ Երէցներու Խորհուրդին :

Երէցներու Խորհուրդը հարցաքննութիւններէ վերջ է, որ « եկողը » կը ճամրէ ու տնոր բացակայութեան կուտայ իր որոշումը « ընդունուած » կամ « ոչ » պատասխանող :

Ոչ — սկառւտ մը երբ իրը թեկնածու Երէց ընդունուած է, իր թեկնածութեան չքջանին պարտի կատարել սկառւտին խոստումը եւ զործագրել անոր կուտանիքը . իսկ առելի դաս, ամէնքը պարտին կատարել Երէցներու հետեւին խոստումը . —

- 1) Կը խոստանամ՝ հրաժարիլ աղայական անուելի հաճոյքներէ :
- 2) Կը խոստանամ մարմինս զերծ պահել, ամէն խոշտանկումներէ, որպէս զի զայն անորստ նուիրեմ աղակայ կողակցին :

- 3) Կը խոստանամ ծառայել աղզիս, պարագաներուս եւ Հ. Մ. Բ. Ք. Հայ Ակառւտներու ընդհ . Միութեան, անոր փրոփականութին եւ աճումին, հարթելով եւ ծաղկեցնելով անոր գծած ճանաղարձը, եթէ այդ ճամրուն վրայ, խոչընդուններու եւ արդելքներու հանդիպիմ, կը խոստանամ, հարթել ու տապալել զանոնք, նոյն իսկ կեանքիս գինովը :

Երէց սկառւտներու նշանարանն է՝ « Բարձրացիր եւ Բարձրացուր » . իսկ կարգախօսուր՝ « Ծառայել ու Պահպանել » : Երէց սկառւտներու ոլաշտօնական քայլերքն է .



Հ.Մ.Ֆ.Մ.Ի ՍՈՒՐԵՆՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾՈՒՆՔՈՒԹԻՒՆԸ

5 — Թրիփոլի. — Կազմուածէ է 1928-ին. գործունէութեան ընդարձակ դետին մը չէ ունեցած, դրազած է առաւելապէս ֆութազօլի խաղեր կազմակերպելով։ Իր Ա. խումբը միշտ մասնակցած է միջմասնաճիւղային Բ. դասակարգի մրցումներուն։ Տուած է յաճախ դասախոսական ժողովներ ու ներկայացումներ աշխատող տարրեր անպակաս են, ու քիչ մը աւելի կազմակերպուած ջանքերով կարելի է աւելի ժայլուն շրջան մը բոլորել։ Վերջերս ունեցաւ կարեւոր մրցում մը քաղաքի « Խւնիօն Սրորթիլ Թրիփոլի »ի հետ որը մեծ յոխորտանքով դաշտ իջած է 12 կոլերով պարտութեան մատնելու Հ. Մ. Լ. Մ. ը., բայց արգիւնքը եղած է անպաստ, մեր աղաքը կանոնաւոր խաղարկութենէ մը յետոյ յաղթական դաւրս ելած են 2-1-ով, ինչ որ չնորհաւորելի է ի տես հակառակ խումբի կարսղութեան։ Մասնաճիւղը սկսուածներ չունի անդամներութեւը կը հասնի 40-ի, իսկ ողիւտնէն՝ 3,000 ֆրանք։

6 — Լաբարֆիա. — Հիմնուելու թր-
տոկանէն (1928) մինչեւ 1933 դրազած է
սոստելապէս Փութազօլով ու դասախոսա-
կան կրթիչ հաւաքոյթներով։ Իր Ա. Էւ Բ.
խումբերը որսոնցմէ առաջինը տեղոյն
տեղացի եւ Փրանսացի խումբերու հետ
ունեցած իր մրցումներուն մէջ միշտ յաղ-
թական գուրս ելած է։ Հ. Մ. Բ. Մ. ի
միջմասնաճիւղային տարեկան հանդի-
պումներուն, մինչեւ 1931 կը մասնակցէր
Բ. դասակարգի մրցաշարքերուն, բայց
այդ թուականին ցոյց տուած իր յաջողու-
թիւններն ու խաղի թէքնիքի դարզացու-
մը, առիթ տուին իրեն արժանի դասուե-
լու Ա. դասակարգի խումբերու մէջ, ու
խոկապէս ալ այդ բարձրացումը իր օգտա-

կարութիւնը ունեցաւ, խթանելու համար խաղացազները, որպէս զի ջանան Ա. զառակարգի խուժքերու մէջ արժանի դառուելու իրաւունքը արդարացնելու :

Մասնաճիւղը այժմ ունի 36 հազուած
սկառատներ, որոնց զգեստաւորումի ամ-
բողջական ծախքերը սիրով տրամադրել-
ցին Պէյրութի համակրելի վաճառական-
ներէն Խանամիրեան Եղբայրները, որոնք
մասնաճիւղի բարերար անդամները ըն-
դունուած են մասնաճիւղի ընդհանուր ժողո-
վին կողմէ առ ի գնահատանք անոնց ցոյց
տուած ազնիւ զգացումներուն հանդէպ Հ.
Մ. Ի. Մ. ի Լաթարիու մասնաճիւղին:

Մասնաւճիւղը տեղացի խումբի մը
հետ միասին ունի մարզակաշտ մը ձրիօ-
րէն տրամադրուած կառավարութեան
կողմէ, ուր մեր եղբայրները համերաշ-
խօրէն տեղացիներուն հետ կ'օգտագոր-
ծեն պարն :

Անդամներու թիւը 60 է, իսկ տարեկան պիւտաձևն՝ 2,500 ֆրանք:

7 — Գրըգլուան. — Հակասակ զաղութիւն սակաւաթիւ հայերուն, Հ. Մ. Բ. Մ. ը յաջողած է իր զրօշին տակ համախմբել փոքրաթիւ եւ կղզիացած զաղութիւ բացարձակ մեծամասնութիւնը: Ինչպէս ամէն տեղ, հռո եւս երբ 1931-ին կազմուեցաւ, Հ. Մ. Բ. Մ. ի մասնաճիւղը, միայն 10 անդամներ քաջութիւնը ունեցան առաջին քարը դնելու, բայց այդ տասը չուտով բարձրացաւ 20-ի, 30-ի, ու այժմ մասնաճիւղերու մէջ իր լուս աշխատանքներով եղական կարելի է համարել:

Մասնաճիւղի զործունէութեան առանցքը կը կազմէր առհասարակ Փութուլը, բայց վերջին տարին, Երջ. Վարչութեան թելագրանքին վրայ կազմուեցաւ սկառաւական բաժին մը, ու ոկտօնէ

րոել, ի պատիւ այս վոքքիկ մասնաձիւզին, որ այն վերջին միջմասնաձիւզային մրցումներուն մասնակցեցաւ անակնկալորէն 65 հազուած և սիրուն սկառուտներով:

Իր ֆութազօլի խումբը՝ միշտ գործի վրայ է, քաղաքին մէջ ներկայանալի վրայ է,

8 — Հոման. — Կազմուած է 1932-ին, ու ցարդ կը պահէ իր գոյութիւնը, ուժերու և պարմաններու ներած չափով վարչութիւնը կ'աշխատի վառ պահել մարդանքի սէրը երիտասարդութեան մէջ: Ունի ֆութազօլի խումբ մը որ միշտ կը մասնակցի միջմասնաձիւզային մրցումներու



խումբեր չպահուելուն համար, յաճախ մրցումներու համար կ'երթայ մօսակայ քաղաքները ինչոքէ՞ Ալեքսանտրէթ, Անտիոք, Բիհանի, Հայկալ, և այլն:

Անի իր սեփական դաշտը: Անդամներուն թիւն է 32, իսկ պիւտձէն՝ 1,000 Փրանք:

Բ. գասակարգի չափերուն մէջ:

Անդամներու թիւն է 25, իսկ պիւտձէն՝ 1,000 Փրանք:

(Շարունակելի)

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՇՐՋԱՆ

ՏԵՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ

Օգոստոս 5 – 13 տեղի ունեցաւ սկառատական բաժնի տարեկան բանակումը Ֆիլիպէէն 28 քիլոմէթր հեռաւրութեան վրայ գտնուող Պօյքօվօ զիւղի մօտ, անտառներով չըջալատուած գեղեցիկ վայրի մը մէջ, սառնորակ աղրիւրի մը մօտ:

Ամէն առաւօտ սկառատները կանոնաւոր չուչտական մարզանքներ կ'ընէին, լոդանքէ ու մաքրութենէ վերջ, զրօշի պարզում եւ յետոյ կը սկսէր խըմբակային մըցումները, եւ այլն:

Ի մէջ այլոց սոյն բանակումի ընթացքին տեղի ունեցան մտքի, չափելու, զործնական զիտելիքներու, մօսսի, հաւաքածոներու եւն-ի մըցումներ, ինչ-սպէս նաեւ սկառատներու համար չա՛տ հետաքրքիր 24 ժամուան խմբակային մըցումները:

Կը մասնակցէին հինգ մըցորդ խմբակներ մօտ 45 սկառատներով եւ 30-ի չափ հիւրեր Հ. Մ. Մ. ի մարզիկներ եւ համակիրներ:

Մըցումներու մէջ հետեւեալ խմբակները առաւելադոյն կէտեր ստացան.—

« Արծիւ » խմբակ 240 կէտ, « Օձ » խմբակ 236 կէտ, « Շուն » խմբակ 228 կէտ, « Աքլոր » խմբակ 220 կէտ եւ « Գայլ » խմբակ 210 կէտ:

Առաջին երեք խմբակներուն տրուեցան խմբակային մետայլներ:

24 ժամուան մըցումներէն առաջին հանդիսացաւ « Շուն » խմբակը 47 կէտ եւ երկրորդ հանդիսացան « Արծիւ », « Օձ » եւ « Աքլոր » խմբակները 45-ական կէտով եւ երրորդ « Գայլ » խմբակը 41 կէտով: Սոյն խմբակներուն նոյնապէս տրուեցան մետայլներ:

Բանակումի ամբողջ տեւողութեան պուլիար եւ հայ ազգային եռագոյնները կը ծածանէին:

Իսկ « Կրակի շուրջ » երը ստեղծեցին ընդհանուր խանդավառութիւն:

Բանակումի ի նպաստ Պր. Յակոբ Մալխասեան նուիրեց 500 լէվա: Իսկ ուրիշ ազգայիններ խոստացան վրաններ նուիրել, տեսնելով փոքրիկ հայորդիներու մըջիւնի լոիկ ազգաշէն աշխատանքները:

Բանակումի ընթացքին — Կէս զիշեր մը տրուեցաւ « Ահազանգ » , ըոլոր սկառատները երկու վայրկեանի մէջ ոտքի էին եւ տրուած հրամանին վրայ անվախօրէն ցրուեցան անտառին մէջ կարծեցեալ վիրաւորը գտնելու եւ խնամելու համար ... :

Բանակումի ընդհանուր պետն էր մասնաճիւղիս աւագ խմբագետ եղր. Պօղոս Գանթարեան, իրեն օգնականներ ունենալով եղր. Սիմոն ծամբճեան եւ Զաւէն Փափազեան եւ վարիչներ Յ. Պաճաքեան ու Պ. Փափազեան:

Օտար եւ հայ այցելուներ իրենց հիացումը յայտնեցին բանակումի կարգ ու սարքին ու կարգապահութեան մասին :

Բանակումը փակուեցաւ կիրակի կէս օրէ վերջ մեծ շուքով ու բաշխուեցան մրցանակներ խմբակներու : Սկառուտները ճամբար ելան դէպի իրենց տուները մաղուող անձրեւի տակէն , առոյդ քալուածքով տանելով իրենց հետ զեղցիկ եւ անուշ յիշատակներ :

Ո ՃԱՄՑԵԱԾՆ

Ֆիլիպէ



ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ

ՀԱՅ ՍԿԱՌԻ ՏՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԶԵՌՔ ԶԴԱԾ
Յ Ա Զ Ո Ղ Ա Խ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը

Պուլկար սկառուտներու Սօֆիայի Մ . ճիւղին կողմէ կաղմակերպուած էր Սկառուտ . ընդհ . Բանակում մը , որ տեղի ունեցաւ յուլիս 7 - 12 , Սօֆիայի « Պորխովա կրատինա » կոչուած գեղեցիկ պարտէղին մէջ , մասնակցութեամբ աւելի քան 300 սկառուտներու , որոնք եկած էին Պուլկարիոյ զանազան քաղաքներէն : Ի մէջ այլոց , մասնաւոր հրաւէրներու պատասխանելով իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Սօֆիայի եւ Պուրկազի Հ . Մ . Լ . Մ . ի հայ սկառուտները եւ Զեխոսլովաքիոյ կողմէ ներկայացուցիչ սկառուտ - պետ մը :

Բանակումին բացումը տեղի ունեցաւ մեծ հանդիսութեամբ եւ խուռն բազմութեան մը ներկայութեան : Պաշտօնական անձնաւորութեանց կարգին ներկայ էին՝ Պատերազմական նախարարը , պուլկար ամենաբարձրաստիճան կրօնականներ , Սօֆիայի քաղաքապետը , եւն . , եւն . :

Բանակումի ամբողջ տեւողութեան ընթացքին , Սօֆիայի հայ հասարակութիւնը այցելեց բանակավայր եւ խրախուսեց հայ սկառուտներու աշխատանքը ու խանդավառուեցաւ անոնց ձեռք ձգած զնահատելի յաջողութիւններով :

Չորս օրուան ընթացքին տեղի ունեցան սկառուտական զանազան խաղեր եւ մրցումներ , ինչպէս , կամուրջ շինել , դիտարան կառուցանել , վիրաւոր դարմանել եւ փոխադրել , քարտէզներ գծել , բարիք ընել , « քիմ » խաղ , եւն . , եւն . , որոնց մէջ , մեր հայ տղաքը մեծ յաջողութիւններ ձեռք ձգեցին : Մասնաւորաբար Պուրկազի մրցող « Զի » խմբակը , կարդ մը մրցումներու մէջ բացարձակ առաջնութիւն ձեռք ձգեց (քարտէզ գծել , վիրաւոր դարմանել , « քիմ » խաղ , եւն .) եւ ընդհ . առմամբ յաջողագոյնը հանդիսացաւ :

Թէեւ մրցումներու մէջ առաջնութիւն շահող խմբակը չի յայտարարուեցաւ , սակայն , մրցումներու ընդհ . վարիչին հետ ունեցած մէկէ աւելի խօսկցութեանցո ընթացքին ան իր հիացումը յայտնեց ինձի Պուրկազի « Զի » խմբակին մասին , աւելցնելով որ , ան սկառուտական խմբակ մընէ եւ յաջողագոյնն է շատ մը մրցումներու մէջ :

Մեր աղոց կարդապահութիւնն առ գովելի էր։ Անոնք մեծ հոգ կը տանէին վրաններու կանոնաւորութեան, զարդարանքին եւ բանակալայրի մաքրութեան։ Այս առթիւ, կարելի չէ զնահատանքով չարտայայտուիլ Սոֆիայի աւագ խմբագետ եղբայր լ. Գաղանձեանի տարած անխօնջ աշխատանքին մասին, որուն կը պարտին Սոֆիայի հայ սկառատները, իրենց բանակալայրի մաքրութիւնը եւ կանոնաւորութիւնը։

Բանակումի «կրակի շուրջ» երուն ալ, մեր հայ սկառատները զեղեցիկ եւ ոգեւորիչ թիւերով կը մասնակցէին եւ կը զնահատուէին։

Ընդհանուր առմամբ, հայ սկառատներու մասնակցութիւնը պուլկարական այս ընդհանուր բանակումին շատ լաւ տպաւորութիւն թողուց օտարներուն վրայ եւ առիթը ստեղծեց հայ անունը բարձրանալու եւ գնահատուելու։

ԳՐ. Խ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

(Սկտ. Փոխ-Խմբապետ)

ՍԿԱՌԹՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵՆՔՆ

(Նարունակութիւն էջ 132-Էն)

ՊԱՐՍԿԱՍԱՆԻ Շրջ. Վարչութիւն. — Նմանապէս։

ՍՈՒՐԵՈՅ Շրջ. Վարչութիւն. — Պետին գրութեան պատասխան կը սպասենք։

ՀՆԴԿԱՍԱՆԻ Մասնիւդի կազմութեան հրահանդ եղբ. Օ. Գովանի։

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ Շրջ. Վարչութիւն. — Եռամսնայ տեղեկագրի կը սպասենք։

ՌՈՒՄԱՆԻՈՅ Շրջ. Վարչութիւն. — Եռամսնայ տեղեկագրի կը սպասենք։

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ. — Ստացանք. Երկամսնայ տեղեկագրի եւ մանրամասն նամակի կը սպասենք։

ՊՐԱԶԻԼԻԱ. ԵԽ ԱՐԺԱՆԹԻՆ. — Կր փափաքէինք որ=լուութիւնը խզէիք։

ՀՐԱՀԱՆԳ. — Բոլոր Շրջ. Վարչութեանց Առենապետները անյասպազ մեկ դրկեն իրենց հասցէն։ Նոյնու մեզ զրկեն Շրջ. Սկառատ - Պետերը Շրջ. Վարչութենէն վաւերացուած իրենց հասցէները։ (Մեր հասցէն՝ 55, Ծիւ տը Մօ, Փարիզ (19)։


ՅՈՒՆԱՍԱՆԻ Շրջ. Վարչութիւն. — Առինք ուրախառիթ լուրերը. յաջողութիւն։

« ՀԱՅ ՍԿԱՌԹՏ » ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ԱՌԹԻԻ ԵՐ ԶԵՐՄ ՄԱՂԹԱՆՔՆԵՐԸ ԿՈՒՂՋԵ ԵՐ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ։


ՓՈՔՐԻԿ ԳԻՒՏԵՐ ԵՒ ՀԱՇԵԼԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

—○—

Թիւ 1. — Ձրանսայի կայսրը՝ Նափոլէոն Ա. Շեղինէ կղզին մէջ ուսնիի մը տակ եղող իր գերեզմանը կը դիտէ. գտնել այս պատկերին մէջ եւ թափանցիկ թուղթ մը գնելով պատկերին վրայ Նափոլէոնի պատկերը դժել կարմիր մատիտով, եթէ միւս առարկաները դծուին կապոյտով։ (Պատկեր 1)։



Պատկեր 1



Պատկեր 2

Թիւ 2. — Նափոլէոն, պատերազմին մէջ թեւին մէկը կորսնցնող զինուորի մը պատուանշան կուտայ։ Զինուորը կը հարցնէ Նափոլէոնի թէ՝ « Վեհափա՛ռ տէր, մէկ թեւս կորսնցնելուս ի վարձատրութիւն՝ ինծի պատույ լեզէոնի աստիճան տուիք, եթէ երկու թեւս կորսնցնէի, ի՞նչ պիտի տայիք » — պատույ լեզէոնի սպայի աստիճան, կը պատասխանէ Նափոլէոն։ Այն ատեն զինուորը սուրը քաշելով՝ միւս թեւն ալ կը կտրէ։ Այս պատմութեան մասին փոքրիկ սկառուտներ ի՞նչ կը խորհին կամ ի՞նչ ըսկիք ունին. ամենէն խելացի պատասխանին կը սպասենք։

Թիւ 3. — Գզրոցի մը կոճակին ծակը մեծցած եւ կամ զամը ինկած ըլլալով՝ կոճակը կ'իյնայ յաճախ։ Զայն իր ծակին մէջ լաւ մը հաստատելու համար անոր Ա. կէտէն զնդասեղ մը զամելէ վերջ, անոր զնդիկը կորեցէք Եւ Բ ձեւով երկու ծայրերը ծոելով գզրոցին ծակին բռնութեամբ ներս հրեցէք կամ մեղմութեամբ զամեցէք։ Գեղասեղը Գ. ձեւով ծոած ըլլալով գզրոցին կոճակը հաստատուած կը մնայ իր սեփական ծակին մէջ եւ այլ եւս չիյնար։ (Պատ. 2)։

Հանելուկներու պատասխանը դրկել ծանօթ նասցեով (տեսնել 1 Ինկ-սեմբերի բիւր)։

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՁՕՆՏ

Փարիզի ոկտոբերին 100 ֆրանք 50 սանթիմ :

ՓՈԽԱՆ ՍՏԱՑԱԳՐԻ

Հ. Արքահամեան 20 ֆր., Մանուկեան (նողարավաճառ) 20 ֆր., Փարիզի սկառուտներ 73·50 ֆր., Դահիրէի Հ. Մ. Լ. Մ. 30 ֆր., Ոմն 20 ֆր.:

ՄԵԿ ՏԱՐՈՒԱՆ «ՀԱՅ ՍԿԱՈՒՏ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Ոմն, Ռէնսիի Դալրոցամէր Տիկնանց Վարժարանին :

Ոմն, Սեւոփ Մուրատեան Վարժարանին :

Սամուէլեան, Մօնթէվիտէոյի (Ուրուկուէյ) Ազգ. Մամիկոնեան Վարժարանին :

ՆԱՄԱԿԱՑՈՒՓ

Եղբ. Սափրիչեան (Բիրէա) . — 100 ֆրանքը դեռ չստացանք :

Եգիպտոսի Շքա-Վարչ. — 1, 10 եւ յառաջիկայ թիւերէն քանիկա՞ն օրինակ կ'ուզէք : Արկեցէք որոշ եւ մնայուն հասցէ :

Մեր Ընտանիքը . — Ուրախութեամբ կը տեղեկացնենք վեթերան սկառուտնմբապետ եւ մարզիկ եղբ. Դրիգոր Ճոլօլեանի նշանախօսութիւնը ընդ Օրիորդ էպրուհի Նալպանտեանի : Մեր խնդակցութիւնները : Հայ Սկառուտ

ԾԱԽՈՒ ԳՐՔԵՐ (ԿԱՆԻՒԻԿ)

Հայաստանի Աշխարհագրութիւն Յ. Գ. Պապէսեան 10 ֆրանք. արտասահման 12 ֆր., Սկառուտներու 6·50 ֆր.:

Համայնագիտ. քարտէս Հայաստանի 6 և 8 ֆր.: Հայ Սկառուտներու 3 ֆր.: Ողբ Եղեսեայ. տպ. Փարիզ 1818 փառակազմ 100 ֆր.:

A travers l'Arménie Russe. պատկերազարդ 1893 Փարիզ 85 Ֆրանֆ
Collections des Historiens anciens et moderne de l'Arménie. Ա. Լանկլուտ 2 հատոր 824 էջ 100 Ֆրանֆ:
De Beyrouth à Tiflis պատկերազարդ 20 Ֆրանֆ.

Գերմ. — Յունարէն բառարան, 1146 էջ. Տպ. Աթէնք 1888. 20 ֆր.:
Անկում Յունական կայսրութեան եւ Հաստատութիւն Թուրք կայսրութեան. 2 մեծահատոր տպ. 1660, Ռուսան, էջ 1336. 150 ֆր.:

La France et l'Arménie à travers l'Art et l'Histoire. Ֆ. Մազլէն Փարիզ 1917: 7 Ֆրանֆ:

Դիմել. H. BABESSIANԻ 4 bis Rue Rouget de l'Isle

CHOISY-LE-ROI - Seine (France)